

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

ԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ ՃՀՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Ճշմարտութիւնը կ'արտասուի, երբ կ'անտեսուի նենգաւորներէն ու ստախոսներէն, եւ եթէ որեւէ տեղ հաւատարիմներ ու ուղղախոսներ չգտնուէին զինք մխիթարելու՝ կը հեռանար այս աշխարհէն ու կը բնակէր երկինք, ուր չկայ նենգութիւն եւ ստութիւն:

«Ստախոս շուրթերը պիղծ են Տիրոջ առջեւ, իսկ հաւատքով շարժողը ընդունելի է Անոր» (Առակ. ԺԲ. 22):

ՎԵՐՋ

ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Առաքինութիւններէն մի քանի հատը առանձնական են, որոնք իրենց գործողներուն միայն կը մխիթարեն օրինակ՝ աղօթքն ու ծնրադրութիւնը, Աստուծոյ եւ աստուածայիններու մասին բարեպաշտ հսկումը, մեղքերու գղջումը, ծոմապահութիւնն ու պահեցողութիւնը եւ ապաշխարութեան այլ գործերը: Ասոնք կրօնքին կը վերաբերին: Իսկ մի քանի հատն ալ ընկերային են, որոնք միեւնոյն ժամանակ իրենց գործողներուն եւ ընդունողներուն կը մխիթարեն, ինչպէս կարօտեալներու ողորմիլը, գերիներ ազատելը, հիւանդներու ծառայելը, տրտմածները մխիթարելը, բոլորին բարիք գործելը: Անոնք ալ բարոյականութեան կը վերաբերին: ...

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՂԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈՂԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՆԷՆ

ՆՇԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԵՒՈՅԹՆԵՐՈՒ ՄԵԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Շատ շատեր յուռուժքներ, մատանիներ, ականջի օղեր կը կրեն, յուսալով, որ անոնց միջոցաւ կը պաշտպանուին մութ ուժերէն, բնաւ իրենց միտքէն չանցընելով՝ որ այսպիսով կը կապուին Սատանային հետ:

Կը մնայ ամբողջ հոգիով յուսալ, որ ինք՝ Աստուած, խելքի բերէ մեղքերու մէջ մոլորած նման մարդոց:

ՈՂԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Երկրորդ Օրէնք գիրքին 18-րդ գլխուն 10-11 համարներուն մէջ մեղքերու շարքին նշուած է նաեւ «ոգի կանչել»ը: Ասիկա արդէն կախարդութեան ուրիշ ոլորտ մըն է: Ոգիներ հմայողը այն մարդն է, որ գանազան նշաններու միջոցաւ հրաշքներ կը գործէ, խուսկ ծխելով եւ այլ ծէսերով կ'ապաքինէ հիւանդները, չար ոգիները կը քչէ եւ այլն: Անցեալին յաճախ անոնք օձեր կը հմայէին, ինչ որ մինչեւ այսօր ալ կը տեսնենք: Կան նաեւ մեռելահարցուկներ, որոնք մեռած մարդոց հոգիները կը կանչեն, որպէսզի ապագային մասին գիտնան: Սաւուրը երկրէն քչեց բոլոր կախարդներն ու գուշակները, բայց յետոյ ինք դիմեց անոնց օգնութեան (Ա. Թագաւորներու 28.3-10): Մանասէն կ'ընդունէր ու կը պատուէր գուշակներն ու կախարդները (Դ. Թագաւորներու 21.6): Եռյիեահու թագաւորը քչեց կախարդները, ոչնչացուց ընտանի աստուածիկներն ու բոլոր գուշակութիւնները, բայց Սատանան նորէն ետ բերաւ գանոնք (Դ. Թագաւորներու 23.24):

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -
Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԸՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԲԵՆՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119.105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 8 ՅՈՒՆՈՒԱՐ, 2012

ԹԻՒ 2

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
2.13-23

Գ.ՕՐ ԾՆՆԴԵԱՆ

Երբ մոգերը Բեթլեհէմէն մեկնեցան, Տիրոջ հրեշտակը Յովսէփի երեւցաւ երազի մը մէջ եւ ըսաւ.- Ե՛լ, առ մանուկն ու մայրը եւ

փախի՛ր Եգիպտոս. հոն մնա՛ մինչեւ որ ըսեմ քեզի, որովհետեւ Հերովդէս կը փնտռէ մանուկը՝ զայն սպաննելու համար:

Յովսէփ արթնցաւ, գիշերով առաւ մանուկն ու անոր մայրը եւ գնաց Եգիպտոս, ուր մնաց մինչեւ Հերովդէսի մահը: Այս ձեւով իրականացաւ Տիրոջ խօսքը, Ովսիա մարգարէի բերնով ըսուած. «Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս»:

Իսկ Հերովդէս, երբ տեսաւ որ մոգերը զինք խաղի բերին, սաստիկ գայրացաւ եւ մարդիկ զրկեց, որպէսզի սպաննեն Բեթլեհէմի մէջ եւ անոր շրջակայքը գտնուող բոլոր երեխաները, որոնք երկու տարեկան եւ կամ աւելի փոքր էին, նկատի առնելով Յիսուսի ծննդեան ժամանակը, որ ստուգած էր մոգերէն: Այսպէս իրականացաւ այն՝ ինչ որ Տէրը Երեմիա մարգարէին բերնով կ'ըսէ.- «Գոյժ մը յտուեցաւ Ռամայի մէջ, որը, հեծեծանք եւ յացուկոծ դառնագին. Ռաքէլ իր գաւազներուն համար կու լար եւ մխիթարուիլ չէր ուզեր, քանի այլեւս անոնք չկային»:

Հերովդէսի մահէն ետք, ահա Տիրոջ հրեշտակը Եգիպտոսի մէջ Յովսէփի երեւցաւ երազի մը մէջ եւ ըսաւ.- Ե՛լ, ա՛ռ մանուկն ու մայրը եւ վերադարձի՛ր Իսրայէլի երկիրը, որովհետեւ մանուկը սպաննելու գողները մեռան:

Յովսէփ ելաւ, առաւ մանուկն ու անոր մայրը եւ վերադարձաւ Իսրայէլի երկիրը: Սակայն, երբ լսեց որ Աղքեղայոսը թագաւորած է Հրէաստանի վրայ՝ իր հօրը Հերովդէսի տեղ, հոն երթալու վախցաւ: Փոխարէնը, երազի մը մէջ իրեն հրամայուածին համաձայն՝ գնաց Գալիլեայի կողմերը եւ եկաւ բնակեցաւ Նազարէթ քաղաքին մէջ, որպէսզի իրականանայ ինչ որ Տէրը կ'ըսէ մարգարէներուն միջոցաւ, թէ Նազովրեցի պիտի կոչուի:

ՄԵՌԵՆԻՑԻ ԵՒ ԳԵՆԵՉԱՄԼՈՐՀԱՆՔԻ ՀԱՅԱԿԱՆ ԳԵՂԵՑԻԿ ՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ Եկեղեցւոյ օրացոյցին համաձայն Հինգ Տաղաւարներու յաջորդող օրը կը կոչուի Մեռելոց, այսինքն մեր հանգուցեալներու յիշատակը հաւաքական կերպով յարգելու սահմանաւճ յատուկ օրեր: Տարուան 365 օրերու հեւրոտ ընթացքը մեր աչքին առջեւ ունենալով, երբ յաճախ ապրողներս ալ, զիրար ալ կը մոռնանք, կը տեսնենք՝ որ մեր Հայրերու կարգադրութիւնը որքան իմաստուն է: Արդարեւ, այդ օր մեզմէ բաժնուած հարազատները կրողաւանանք կեանքին առանցքը՝ կը յիշենք զիրենք կ'այցելենք անոնց մասունքներու երկրաւոր վերջին տաղաւարը, հաւատքի ու աղօթքի ճամբով կը վերամիանանք իրարու, եւ կը բաժնենք կանխող մեծ տօներու խորհուրդն ու օրհնութիւնները: *Իրարու հետ բաժնել, միասին տօնել եւ ոչ թէ միայն սգալ անոնց կորուստը՝ ահա այս է հիմնականին մէջ Մեռելոցի Օրուան հասկացողութիւնը:*

Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան համաձայն Եկեղեցւոյ մաս կը կազմեն այս աշխարհի մէջ ապրող եւ այս կեանքէն մեկնած հաւատացեալները, ծանօթ՝ Զինուորեալ Եկեղեցի եւ Յաղթական Եկեղեցի անուանով: Մենք եւ հանգուցեալները կը կազմենք մէկ ամբողջութիւն եւ կ'ապրինք հոգեւոր նոյն շրջանակին մէջ: Մենք կը հաւատանք, որ մեր հանգուցեալ սիրելիներու հոգիները կը շարունակեն ապրիլ մեր հետ՝ սպասելով մեր Տիրոջ երկրորդ Գալուստին: Յիսուս ըսաւ. «Ով որ իմ խօսքս գործադրէ՝ յաւիտեան պիտի չմեռնի» (Յովհ. 8:51): Մեր սիրելիները ապրեցան այս կեանքի մէջ հաւատարմով Քրիստոսի եւ մեկնեցան այս աշխարհէն: Մենք կը յիշենք զանոնք ամէն օր, կը քալենք անոնց ճամբաներէն, անոնց անուները կու տանք մեր գաւակներուն՝ հաւատարմով որ անոնք չեն կորսուիր մոռացութեան ու անէութեան մէջ, այլ մեր միջեւ եղող հոգեւոր կամուրջը անխափան կը մնայ: Մեռելոցի օրերուն մեր ննջեցեալներու գերեզմաններուն վրայ կ'աղօթենք: Սա գեղեցիկ աւանդութիւն մըն է որ իր օգուտը ունի թէ՛ մեզի եւ թէ՛ հանգուցեալին համար:

Մեր օգուտը այն է, որ մեզ կը զօրացնէ անդենական կեանքի մեր հաւատքին մէջ՝ ի Քրիստոս ննջած մեր սիրելիներուն սէրը կենդանի պահելով մեր մէջ: Իսկ հանգուցեալի պարագային, ճիշդ է որ այս արարողութեամբ անոնք անմիջապէս դրախտ չեն մտնել, բայց կը հաւատանք սրտի խորերէն առ Աստուած ուղղուած Աղօթքի ու աղաչանքի զօրութեան, որմէ կ'օգտուին ո՛չ միայն ողջերը այլեւ մեռածները: Ամէն անոնք որոնք կը տարակուսին այս ճշմարտութեան, կրնան բանալ Աստուածաշունչ մատենարը եւ այդտեղ կարգալ որ ողջերու սրտագին աղաչանքներուն ընդառաջելով Բարերարն Աստուած ոչ միայն միօրեայ մեռած Նայինի պատանին ու Յայրոսի դուստրը կեանքի կոչեց, այլ չորս օրուան թաղուած Ղազարոսին կեանք պարգեւեց: Միթէ Բարեգութեան Աստուած որ մօր մը, հօր մը եւ քոյրերու խնդրանքները աննկատ չթողուց՝ մեռելները յարուցանելով, արդեօք պիտի անտեսէ ննջեցեալներու մեղքերու թողութեան համար մեր աղաչանքները: Ահա թէ ինչու համար առհասարակ հանգուցեալներու համար եղած աղօթքները՝ Հոգեհանգիստ թէ Գերեզմանօրհնէք, երբ կը կատարենք սրտաբեկ աղաչանքով, զիտակից հաւատքով եւ բարեյոյս ակնկալութեամբ, խորքին մէջ Աստուծոյ խնամքին կը յանձնենք անոնց հոգիները, վստահելով որ Իր անհուն սիրով Ան յաւազոյնս կը տնօրինէ: Այս հաւատքով, սիրելի հայրողի, երբ Մեռելոցի օրը մոմ վառես հարազատներուդ շիրմին վրայ, զայն վառէ խնդրելով որ Երկնաւոր Հայրը իր ողորմութեամբ վերաբերի անոնց հետ: Ս. Ներսէս Շնորհալիի խօսքերով Տէրը «Չնճէ» անոնց «յանցանքներու ձեռագիրը, եւ գրէ անոնց անունները կեանքի գիրքին մէջ», իր լոյսի խորաններուն մէջ ընդունելով անոնց հոգիները: Խնդրէ նաեւ, որ Աստուած լուսաւորէ քու միտքը, որպէսզի քայլես Իր Միածինին Խաչով բացուած ճամբայէն, որ կեանքէն Կեանք առաջնորդող ճշմարիտ ճամբան է: Եւ փառք տուր Աստուծոյ որ որպէս Հայ Քրիստոնեայ մայրական արգանդէն քեզի այս կեանքին հրաւիրելէ ետք, մահուամբ՝ երկրի արգանդէն քեզ ճշմարիտ եւ յաւիտենական կեանքին պիտի առաջնորդէ:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ՍՈՒՐԲ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Ե՞րբ _____ հաւատարմած _____ են պատարագի արարողութեան այս վալեյուց կերպերը մեր Եկեղեցւոյ մէջ:

Սկիզբները շատ պարզ էր պատարագի արարողութեան կերպը. բայց հետզհետէ ճոխացաւ, մանաւանդ Ս. Ներսէս Շնորհալի հայրապետին ատեն եւ անոր ձեռքով: Ս. Յովհան Ոսկեբերանի աղօթքները մեծ տեղ կը բռնեն մեր Եկեղեցւոյ պատարագին մէջ: Ս. Գրիգոր Նարեկացիին երկու աղօթքներն ալ (Գլուխ. ԼԳ., Դ. եւ Ե. հատուածները) կը կարգացուին: Իսկ Խորհուրդ խորինը երգուած է աւելի վերջերը (ԺԴ. դար), Տարօնեցի երաժիշտ Խաչատուր Վարդապետի կողմէն հանդիսաւոր առիթով մը:

Հաւատացեալը ի՞նչ ձեւով պէտք է մասնակցի Սուրբ պատարագին:

Սուրբ պատարագ պէտք է մատուցուի հաւատացեալներուն պատկառանքովը եւ երկիւղածութեամբը լեցած մթնոլորտի մը մէջ: Ո՛չ մէկ շշուկ եւ փսփսուք, ո՛չ մէկ երթեւեկ, վերջապէս ո՛չ մէկ օտար շարժում եւ ձայն, բացի արարողութիւնը կատարողներու ձայնէն եւ շարժումէն: Բոլոր հաւատացեալներ, աշխարհական թէ եկեղեցական, իրենց միտքը եւ խորհուրդը կեղրոնացնելու են աստուածային խորհուրդին եւ անսայթաք հետեւելու են աղօթքներուն եւ երգերուն:

Դժբախտաբար մեր եկեղեցւոյ մէջ, հակառակ մեր ժողովուրդի բարեպաշտութեան, այս պայմանները չեն յարգուիր: Դուրս ելլել մտնել...

Շարունակելի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՏԻՐՈՋԸ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ

Քու բոլոր ճամբաներուդ մէջ Տէրը ճանչցի՛ր: Առաջ 3.6

Ահա նոր տարի մը ու նոր ճամբայ մը, մութ ու անծանօթ, բեռնաւոր անակնկալներով՝ ուրախ ու տրտում: Դժուարութիւններով ու յաջողութիւններով, վտանգներով ու խրթին հարցերով: Սակայն մի՛ վախնար երբեք: Կանգ ա՛ռ պահ մը ու տես, թէ քու ապահովութեանդ համար ո՞վ է որ քեզի հետ կը թեւակոխէ այս նոր ճամբուն մէջ: Անիկա քու Տէրդ է, լաւ ճանչցի՛ր զԻնք: Ան քու Արարիչդ է եւ քու Փրկիչդ, ամենակարող ու ամենագէտ: Քեզի համար միշտ ու միայն բարին կամեցող, որուն շնորհքը կը բաւէ քեզի ամէն պարագայի համար:

Ահա մեծ խոստում մը այս նոր Տարուան համար. «Տէրը քու առջեւ պիտի երթայ ու Իսրայէլի Աստուածը քեզի թիկնապահ պիտի ըլլայ» (Ես. 52:12): Ո՛հ, ի՞նչ անիմանալի պատիւ է, որ թագաւորաց թագաւորը յօժարած է եւ Իր մեծափառութեամբ զիջած է անձամբ քու առջեւ երթալ եւ քու թիկունքիդ՝ քեզի թիկնապահ կենալ: Ինչո՞ւ, ի՞նչպէս: Ահա գաղտնիք մը մեծ եւ սքանչելի: Մի՛ վախնար, քեզի չարիք պիտի չի հասնի ու քու բնակարանիդ հարուած մը պիտի չի մօտենայ, որքան ատեն՝ որ Ան քեզի իբրեւ պահապան կը կենայ:

Ճանչցի՛ր զԱյն: Ճամբադ մո՞լթ է, սակայն ինչ փոյթ, կեանքի Արեւը քեզի հետ է: Անիկա քու աջ ձեռքիդ քով քու հովանիդ է, քու աջ ձեռքիդ կը բռնէ: Անոր հետ քալողը բնաւ խաւարի մէջ պիտի չի մնայ:

Ուստի չի վայելեր, քեզի, որ այսօր տրտում սկսիս ճամբադ: Ան զիտէ թէ ի՞նչու կը հրամայէ քեզի բոլոր սրտով ուրախ եւ գուարթ ըլլալ (Սով. 3:14) եւ բանի մը համար հոգ չընել (Փիլ. 4:6): Քանի որ ինք՝ բոլոր շնորհաց Աստուածը եւ բարեաց Աղբիւրը, քեզի հետ կը քայլ միշտ: Միայն թէ ճամբուդ ընթացքին «Անկէ զգուշացի՛ր ու Անոր խօսքը մտիկ ըրէ՛, Անոր անհնազանդ մի՛ ըլլար (Ելից 23:20-21): Ահա այսպիսով պիտի ճանչնաս զԱյն եւ Անոր քաղցր ըլլալուն համար հետզհետէ աւելի պիտի առնես:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ**

1.1-12

Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ: Աստուած զինք ամէն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր՝ որ տիեզերքը ստեղծեց: Որդին, Հօրը փառքին յոյսը եւ անոր հոլթեան ճշգրիտ պատկերը, որ իր խօսքին գորութեամբ տիեզերքը կը պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ ետք, երկինքի մէջ նստաւ Աստուծոյ Գերագոյն Զօրութեան աջ կողմը:

Անիկա շատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուծոմէ իրեն տրուած գերազանց անուէր ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին Աստուած ըսաւ. «Դուն իմ որդիս ես, այսօր քեզ ծնայ»: Կամ ո՞ր մէկ հրեշտակին ըսաւ. «Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անիկա՝ ինծի որդի»: Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին աշխարհ կը զրկէր, ըսաւ. «Աստուծոյ բոլոր հրեշտակները թող պաշտեն զայն»:

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն կ'ըսէ. «Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ եւ իրեն ծառայողները՝ կրակի բոցի պէս»:

Մինչդեռ Որդիին կ'ըսէ. «Քու աթոռդ, ո՞վ Աստուած, յաւիտեան կան է. արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես: Ահա թէ ինչու, ո՞վ Աստուած, քու Աստուածդ ուրախութեան իւղով օծեց քեզ, քու ընկերներէդ աւելի»:

Դարձեալ, ուրիշ տեղ մը Որդիին կ'ըսէ. «Դուն, ո՞վ Տէր, սկիզբէն ստեղծեցիր երկիրը: Եւ երկինքը քու ձեռագործդ է: Անոնք պիտի կորսուին. բայց դուն կաս եւ կը մնաս: Անոնք հագուստի պէս պիտի մաշին. վերարկուի մը պէս պիտի ծալլես գանոնք եւ հագուստի մը պէս փոխես: Բայց դուն միշտ նոյնն ես եւ քու տարիներդ վերջ պիտի չունենան»:

ՄԻԱՄՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

Ամենակալ Տէր, Դուն որ փառքով կը պսակես Քեզի յուսացողները եւ կը կատարես Քեզմէ վախցողներուն փափաքը, մեզ ալ արժանի ըրէ՛, Տէ՛ր, որ Քու վրադ մեր յոյսը պահենք, եւ համբերութիւն տուր մեզի, որ մեր ընթացքը կատարենք այս նեղութեամբ, որուն մէջ կը գտնուինք: Դուն՝ որ մեր ցաւերը կը բժշկես, սրտաբեկները կ'առողջացնես, նեղեալները կը հանդարտեցնես, կապաւածները կ'արձակես, սգաւորները կը մխիթարես, անյոյսներուն յոյս կու տաս, խռովածներուն՝ հանգիստ, եւ յոգնածները նաւահանգիստ կը հասցընես: Դուն՝ որ սիրով կը նայիս քու արարածներուդ եւ քու քաղցրութեամբդ կը կերակրես բոլորը, տո՛ւր մեզի, Տէ՛ր, որ մենք ալ պսակը առնենք բոլոր անոնց հետ՝ որոնք արժանի ըրիր քու անունիդ համար մեռնելու փառաւոր մահուամբ, որպէսզի մենք ալ արժանի ըլլանք յափշտակելու քու սիրելի Որդիիդ ղիմաւորութեան, երբ գայ իր ճառագայթող յոյսին մէջ առնելու սրտանց իրեն փափաքողները, եւ ճշմարտութեամբ դատելու ամբողջ տիեզերքը իր բարկութեան կրակով: Փա՛ռք քեզի, Որդիիդ եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին, յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

**ՍԻՐՏԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ
ՄԱՐԴՈՒՆ ԿԸ ՎԵՐԱԲԵՐԻՆ, ԲԱՅՑ
ԼԵԶՈՒԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ
ՏԻՐՈՋՄէՆ Է
(Առակագ 16. 1):**